

մար խռնուած ժողովուած էր գոռոզն Խորայէլ թերահաւատ հոգւով-  
այլ մի սուրբ յարկի տակից որին հիւնչով ենք կոչում, և որի նուիրա-  
կան քարերի վերայ ամենքս հաւատարմութեան ձեռք դրած՝ պաշտում  
պաշտպանումենք Նորան թշնամու անհամբոյր աւերմունքից:

Քրիստոնեայ եղբայրներ, ուսման փրկարար գիտելեաց վերայ ազգու  
և անոյշ բարրառով մեր սրաի հետ ներգաշնակ խօսող, մեր նախնեաց  
այս կենգանի և ոգեբուզն գրուածքները իմաստասիրենք լրջմտութեամբ:  
Խմաստասիրենք, որովհետեւ նոքա, մեզ՝ հաւատոյ մէջ անարի և տկար  
մարդիկներիս ոչ այլ ինչ են սովորեցնում, եթէ ոչ անյոզգողդ հաւատ  
և ամբիծ սէր: Խմաստասիրենք, որովհետեւ նոքա և մեր կեանքը աշ-  
խարհիս գարշ աղտեղաւթիւններից ազատ պահպանող արդարութեան  
և զգաստութեան դասեր են սովորեցնում: Սիրենք գառն աշխատան-  
քով կառուցած նոցա այժմ շէն և անշէն սրբավայրերը. և ինչ հոգւով  
վերաբերուեցին նոքա գէպ այս անշունչ զաստկերտները, նոյն հոգւով  
վերաբերուենք և մենք նրանց, ընդ միշտ ծառայացնելով նոցա մեր բա-  
րոյական օգտին: Սիրենք սոյն ձեռակերտների վերայ կեանք և ջանք  
մաշող մեր տօնելի սուրբ հայրերին. և ինչպէս նոքա իրենց զլուխը  
սուրբ գրքի սնարի վերայ դնելով իմաստացան և զարգացան պէսպէս  
շնորհներով: այսպէս և մենք նոցա քաղցրախօս երկերի վերայ, անդուլ  
անդադար ձեռք դնելով: մարդենք նրանցով մեր հոգին ու միտքը կա-  
տարեալ ուսմամբ և կատարեալ գիտութեամբ:

ՍՈՅԱԿԻ ՍԱԼՐԳԱԼԵՎԱԳ.

## ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

Մայրակարմիր նշոյլք Արփերին  
Երկնից ի ծիր երբ ցոլան վառ  
Եւ բոց ճամանչքն Հայոց լերանց  
Զբարձրաբերձ ներկեն կատար,  
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,  
Զէ այն գարուն Հայաստանի:  
Գահոյք ճմրոն յապտիպայից  
Երբ գիտապատ անկցին կործան  
Եւ գետք պղտոր ի ծով ահեղ  
Փութան ալեօք վիշապամայն,  
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,  
Զէ այն գարուն Հայաստանի:  
Առուակք վճիտ եւ հեղասոյլ  
Երբ սրանան ծաղկանցն ի հոյլ,  
Վարդ, մանուշակ եւ սուրբ շուշան  
Զկենուակն բուրեն զրոյր,  
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,  
Զէ այն գարուն Հայաստանի:

Երբ ընդ այգւոյն ցօղատարտի  
Թուչի զեփիւր մեր կենսառիկ  
Եւ ընդ բաղկիւն թեւոց նորին  
Զուղի լայնեն սէջք դալարիք,  
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,  
Զէ այն գարուն Հայաստանի:  
Երբ ժաղկալից հայսին ի գոյ-  
գաւունիկն չքնազ հանէ գրնդիւն  
Եւ հիացմամբ էք համօրէն  
Հրճուին ծառոցն ի սոսափիւն,  
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,  
Զէ այն գարուն Հայաստանի:  
Եսր քաղցրասոյլ երդէ սոխակ  
Ո՞նկակորոտ ի գեղ վարդին,  
Եւ հանէ ճիկ նորիկ ծիծառն  
Եւ սուլէ սուրբ Ճայն սորիկին,  
Ո՞հ, դու, սիրտ իմ, մի հրճուիր, մի,  
Զէ այն գարուն Հայաստանի:

Երբ գարդարին գեղածիծաղ  
Տերեւալից ծառք անտառաց  
Էւ յամենաւստ հնչեն յուրաստ  
Պանդուխա թուշոց երգ աւետեաց,  
Ո՞հ, գու, սիրու իմ, մի հրճուիր, մի,  
ԶԵ այն գարուն Հայաստանի  
Երբ խառն ամփեայք կախուց, եզանց  
Լուսն ի գաշտն ըզբառաջիւն  
Էւ ի լերինս արօսական  
Համից քաղցրիկն հնչէ մոպիւն,  
Ո՞հ, գու, սիրու իմ, մի հրճուիր, մի,  
ԶԵ այն գարուն Հայաստանի  
Երբ այգեստանք մեր եւ պարտէզք  
Ետանրաբեռնեալք պազպէք անուշ՝  
Կաչեն զմեզ հրճուտնս յանդուն,  
Էւ մշակին փաղփողէ յոյս,  
Ո՞հ, գու, սիրու իմ, մի հրճուիր մի,  
ԶԵ այն գարուն Հայաստանի.

Ա.Ա. Երբ ի բյու սուրբ գիտութեան  
Կապաւին սգիք Հայոց համայն,  
Ի միւթիւն, յերկնային սէր  
Գրկէ, գգուէ այր իւր ընկեր,  
Վարժարանաց դնին հիմունք,  
Ծաղկին ուսմամբ անուս մանկութք,  
Թեւ խառն ընդ թեւ եւ սիրտ ընդ սիրտ  
Երեւ, մշուկ բաղմաքիրա.  
Յօդուտ ազգի եւ Հայոբենիաց  
Գործ գարծեսցեն միշտ աննախանձ,  
ՔԷՆ չարաջնը ուսեւութեան  
Դիշին ի բոց միանդամյն,  
Էւ ի կրօն սուրբ կենոսունակ  
Լեցին յաւէա քաջ նահասակ,  
Միոյն յայնիմամ հրճուեանց, սիրու իմ  
Ա.Ա. է գարուն Հայաստանին:

ՅՈՒ.ՍԵ.Փ Վ.Ա.ՐԴ. ՓԻՆՈ.ԶԵԼԿՆՅ.

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԿ Ի ՄԵՌԵԼՈՅ

Հաւատացեալք Քրիստոսի, մեր մարգաւէր Փրկիչը մարգիան վրկու-  
թեան մեծ գործը փառաւոր յաղթանակաւ ի զլուխ տարաւ, յաղթեց  
աշխարհի իշխանին, առ ոտն կօխից մեղքերի ամեն տեսակները, հար-  
թեց մեր յառաջ առաքինութեան, բարեգործութեան և զէպի Աբրա-  
յումիւն առաջնորդող նեղ և անձուկ ձանապարհը, խորտակեց մարդ-  
կութեան վերայ բռնացող յաւիտենական մահուան եղջերները և  
աստուածային փառօք յարեաւ ի մեռելոց, եւր յարութիւնը մեզ հա-  
ւատացեալներիս նոյնօրինակ յարութեան անսուտ առհաւատչեայ պար-  
գևելով, նորա ամբողջ երկրաւոր կեանքը մի երկունք, պատրաստու-  
թիւն էր մեր տմենիս փրկութեան. մեր կեանքը ևս թող երկունք ու  
պատրաստութիւն լինի մեր սեպհական փրկութեան. Յիսուսի յարու-  
թիւնը աւետաղ երկնային հրեշտակի ձայնը թող յարուցանէ և մեզ մեր  
բարոյական մեռելութիւնից լցնէ մեր սրտերը Յիսուսի և ընկերի սի-  
րով. զինէ մեր հոգին մեր յարութեան և երանական վայելման յու-  
սովն ու հաւատովը. որով կարող լինինք քրիստոնեավպայիւլ առաքի-  
նութիւններով և բարեգործութիւններով յաղթանակել աշխարհի և  
նորա ամեն Հոգեկորոյս մեղքերի և հրապուրանքների վերայ. և մեր  
հոգերուն գոհութեան և փառարանութեան և աղօթից անուշահոս  
իւղով և խնկով պատրաստունք տօնելու Փրկչի Աստուածային յա-  
րութիւնը, յաւիտենական կենաց մէջ նորան փառակից լինելու կեն-  
գանի յուսովն ու հաւատովը.